

00ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈԻԼ - 2021 թ.

Տևողությունը – 150 րոպե

1. Գտնել 18-ի բաժանարարների քանակը:

- 1) 4                      2) 5                      3) 6                      4) 7

2. Մեքենան 1 ժամ 40 րոպեում անցավ 144 կմ: Այդ ընթացքում մեքենան յուրաքանչյուր վայրկյանում քանի՞ մետր էր անցնում:

- 1) 20                      2) 24                      3) 25                      4) այլ պատասխան

3. Դավիթը աստղանիշերը փոխարինեց թվանշաններով այնպես, որ՝  $8 * 9 < * 10 < * 00$  : Գտնել Դավիթի գրած թվանշանների գումարը:

- 1) 17                      2) 18                      3) 19                      4) 20

4. Գտնել այն երկնիշ թվերի քանակը, որոնց թվանշանների գումարը 3-ի բազմապատիկ է:

- 1) 29                      2) 30                      3) 31                      4) 33

5. Եթե եռանիշ թվի մի թվանշանը ջնջեն, ապա կստացվի 99: Քանի՞ հատ այդպիսի եռանիշ թիվ կա:

- 1) 27                      2) 29                      3) 30                      4) այլ պատասխան

6. Օպերատորը (մուտքագրողը) օրական 6 ժամ աշխատելով, 3 օրում կարող է 54 էջ մուտքագրել: Նա օրական քանի՞ ժամ պետք է աշխատի, որ 8 օրում 120 էջ մուտքագրի:

- 1) 8                      2) 6                      3) 5                      4) 4

7. Գրատախտակին մի տողում գրված է 20 հատ 1 թվանշանը: Քանի՞ հատ “+” նշան պետք է դնել նրանց միջև, որ գումարը ստացվի 200:

- 1) 8                      2) 9                      3) 10                      4) այդպես հնարավոր չէ

8. 3-ով վերջացող երկնիշ թիվը բազմապատկեցին 45-ով և ստացան 3-ով սկսվող քառանիշ թիվ: Գտնել ստացված քառանիշ թվի թվանշանների գումարը:

- 1) 21                      2) 20                      3) 19                      4) 18

9. Գտնել այն երկնիշ թվերի քանակը, որոնք 2-ով բազմապատկելիս ստացվում է երկնիշ թիվ, իսկ 3-ով բազմապատկելիս՝ եռանիշ թիվ:

- 1) 13                      2) 14                      3) 15                      4) 16

10. 4 գրիչի և 3 մատիտի համար վճարեցին 370 դրամ, իսկ նույնպիսի 2 գրիչի և 3 մատիտի համար 230 դրամ: Քանի՞ դրամ պետք է վճարել 7 գրիչի համար:

- 1) 490                      2) 560                      3) 420                      4) 630

11. Արկղում կա 8 կարմիր, 9 կանաչ և 10 կապույտ գույնի գնդակներ: Առանց նայելու ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է հանել արկղից, որ նրանց մեջ լինի որևէ երկու գույնից գոնե 2-ական գնդակ:

- 1) 4                      2) 6                      3) 13                      4) այլ պատասխան

12. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն (օրինակ՝ 02 : 21): Օրվա ընթացքում քանի՞ անգամ է ժամացույցի ցույց տված թվանշանները համընկնում 2021 թվի թվանշանների հետ ( 1 հատ՝ 0, 1 հատ՝ 1, 2 հատ՝ 2 ):

- 1) 9                      2) 10                      3) 12                      4) այլ պատասխան

13. 3, 5, 9, 17, 33, ..., ..., թվերը գրված են որոշակի օրինաչափությամբ: Գտնել 33-ից հետո գրված հաջորդ երկու թվերի գումարը:

- 1) 188                      2) 194                      3) 198                      4) այլ պատասխան

14. Եթե մտապահված թվի եռապատիկից հանենք 8 և ստացված թիվը բաժանենք 5-ի, ապա կստանանք 14: Գտնել մտապահված թվի թվանշանների գումարը:

- 1) 8                      2) 10                      3) 11                      4) 12

15. Արամը գումարեց ընթացիք շաբաթվա շաբաթ և կիրակի օրերի ամսաթվերը և ստացավ՝ 27: Ի՞նչ կստանար Արամը, եթե գումարեր այդ շաբաթվա մնացած օրերի ամսաթվերը:

- 1) 48                      2) 50                      3) 53                      4) 55

16.  $AB$  հատվածի վրա  $C$  կետը նշված է այպես, որ  $BC$  հատվածը 2 անգամ մեծ է  $AC$  հատվածից:  $A$  կետի և  $BC$  հատվածի միջնակետի հեռավորությունը 14 սմ է: Քանի՞ միլիմետր է  $B$  կետի և  $AC$  հատվածի միջնակետի հեռավորությունը:

17. Անին համարակալեց մաթեմատիկայի տետրի էջերը՝ օգտագործելով 183 թվանշան: Քանի՞ թերթ ունի Անիի տետրը:

18. Իրարից տարբեր և հորիզոնական շերտերից կազմված քանի՞ եռագույն դրոշ կարելի է կարել 3 տարբեր գույնի կտորներից:

19. Երեք թվերի գումարը առաջին թվից մեծ է 26-ով, երկրորդից՝ 34-ով, երրորդից՝ 42-ով: Գտեք այդ թվերի գումարը:

20. Վարդանը գրատախտակին գրված թիվը փոխում է հետևյալ կերպ՝ եթե թիվը բաժանվում է 3-ի՝ թվից հանում է 1, եթե 3-ի բաժանելիս մնացորդում 1 է ստացվում՝ թվին գումարում է 2, իսկ եթե 3-ի բաժանելիս մնացորդում 2 է ստացվում՝ թվից հանում է 2: Գրատախտակին գրված է 100 թիվը: Ի՞նչ թիվ կստանա Վարդանը 15 քայլից հետո: